„ՄՈՒՐՃԻ" ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ընդհանուր շնորհակալութիւն բոլոր այն անձներին, որոնք «Մուրճի» հրատարակութեան առիթով մեզ շնորհաւորեցին թէ հեռագրով և թէ նամակով։ Մենք մեր կողմից բոլոր մեր բաժանորդներին շնորհաւորում ենք Նոր-Տարին, Քրիստոսի Մնունդը և Մկրտութիւնը։

ԹԵԼԱՒ. պ. Ն. Տէր-Ցարութիւնեանցին։ Ձեր ուղարկած «Աղբիւրի» բաժանորդագինը և մարկանները հասցրինք ըստ պատկանելոյն։

ԲԱԹՈՒՄ. պ. Խօջամիրեանցին։ Ձեր ուղարկած 15 ր. հասցրինք «Արձագանքի» խմբագրութեան, բաժանորդների անունների հետ միասին։

ԲԱՔՈՒ. պ. Ա. Ղարաբէկեանցին։ Երեք բուբլին և մարկանները հասցրինք «Աղբիւրի» խմբագրութեան։

ԹԻՖԼԻՍ. * * Դուք, ի հարկէ, բոլորովին կը թողնէք կրճատումներ անելու սովորութիւնը։ Պատիւներ ղնելով, Դուք անչափ դժուարացնում էք խմբագրութեան և գրաշարների գործը։ Միւս անդամ այդպիսի ձեռագիր չի ընդունիլ։

— Օրիորդ Մ. Հրուշոն։ Ձեր ուղարկած վէպը անլարմար դատանք։ Դուցէ առ ալժմ։

ՎԱՐՇԱՒԱ. պ. Լիսիցեանցին։ Հանուշի դրքի մասին ուղարկեցէք. կարճ լինի։

ԺԸՆԵՒ. պ. Օհանեանցին։ Եթէ կամենալու լինիք տարաւ բաժանորդ լինել, Դուք կ'ունենաք ուղարկելու միմիայն երկու բուբլի մարտի 1-ին և ոչ չորս.—ուսանողական վճարը ութ բուբլի է։

ՁԽԱՐ. պ. Մալխասին։—Ոչինչ չենք կարող ասել, մինչև կարդացած չենք լինիլ Ձեր գրուածքը։ Բայց եթէ նա 24 մեծ թերթերից է բաղկացած, խնդրում ենք որ ինքներդ լաւ նայէք, նախ քան կ'ուղարկէք։ Ինչ և իցէ, մի' շտապէք. տպագրելու վէպերով «Մուրճը» արդէն ալժմ չափազանց առատ է։

ԱՍՏՐԱԽԱՆ. պ. Վ.-ին։ Ձեր նախերդը անլարմար դտանք «Մուրճի» համար։

ՄԻ ՄԵՆԱՍՏԱՆԻ Սուրբ-Հայրերին։ Խմբագրութիւնը ցաւում է, որ

Ձեզ մօտ ընթերցանութեան սէրը չէ կապուած տարեկան տասը բուբլուց դրկելու պատրաստականութեան հետ, որ նոյնն է, թէ չորսից ամեն մէկը դրկէր տարեկան $2^1/_2$ բուբլուց։

ԵՐԵՒԱՆ. Կ. Կ.-ին։ Ինչու էք դժուար կարծում ընկերութեամբ «Մուրճ» ստանալը։ Ահա Ձեզ մի խորհուրդ. թո՛ղ Ձեր չորսից մէկը իրաւունք ունենայ իւր անունով «Մուրճ» ստանալ և մօտը պահել 10 օր ու վերջը իւր սեպհականութիւն համարէ, վճարելով 5 բուբլի 50 կոպ., երկրորդը իրաւունք ունենայ առաջնից ստանալ համարը 10 օրից վերջ և մօտը պահել 7 օր, վճարելով 2 բուբլի. երրորդը ստանայ երկրորդից և մօտը պահէ 7 օր, վճարելով $1^1/_2$ բ. տարեկ. չորրորդը ստանայ երրորդից և պահէ մօտը 5 օր, վճարելով տարեկան 1 բ. և վերադարձնելով գլխաւոր բաժանորդին։ Եթէ 10 բուբլի դրամագլխով ընկերութիւններ կազմել դժուարանում էք, էլ ի՞նչ վստահութիւն ունենանք ձեզ վերայ, երբ ձեզ հարկաւոր կը լինի մեծամեծ գործեր կատարելու համար ընկերութիւններ կազմել։ Ներկայ դէպքում պահանջւում է մի փոքր կամք և մի քիչ էլ իրար հետ հաշտ մնալու ու պայման կարգելու չափ կրթութիւն։ Այդպէս վարուելու լինին ոչ-ունեորները —այսօր մենք միայն Ձեր քաղաքից կ'ունենանք մի քանի հարիւր բաժանորդ և մեր գրական—բաժանորդական դարդն ու բալէն մի անդամից վերացած կը լինէր։ Օրինակ առէք և հետևողներ շատ և շատ կ'ունենաք։ Վիճելի դէպքերում, վիճակ գցեցէք, բայց երբէք բանը վիճաբանութեան չը հասցնէք։ Երբ դուք չէք հաշտւում, միմիայն դուք չէք վնասում, վնասում ենք և մենք՝ ոչ դուք էք բան ստանում, ոչ մենք։

ԷՋՄԻԱԾԻՆ. Եղիշէ վարդապետ Ամատունուն։ Հասցրինք «Արձագանքի» խմբագրութեան նորան հասնելի 5 բուբլին։

ՄՕՆՊԵԼԼԻԷ. Հայ ուսանողներին։ Խոստանում ենք Ձեզ բաժանորդ համարել, կամ երբ մէկը Ձեր անունով նէէր կ'անէ, կամ երբ ինքներս 10 բուբլու չափ աշխատանք կ'ունենանք։

ՍԱԼԵԱՆ. պ. Յովհ.-ին։ Ձեզ նամակ կը գրենք։

ՕԴԵՍՍԱ. Հայ ուսանողներին Կայսեր. Նովո-բուսեան համալսարանի։ Ստացանք ուսանող պ. Վիրապեանից և հասցրինք «Արձագանք» շաբաթաթերթի պ. խմբագրին «Արձագանքի» բաժանորդագինը հինգ բուբլի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Գնդապետ պ. Իզբ.-ին։ Շատ շնորհակալ ենք Ձեր կոմպլիմենտների համար։ Ձեր լոյսերը և մեր ցանկութիւնները իրար հետ ընում են։ Յայ Աստուած, որ ապագան իրագործի մեր լոյսերը

ՂԶԼԱՐ. պ. Մ. Մարախրոսեանցին։ Հարկաւոր եղածից մի ռուբլի աւելի էք ուղարկել։ Կարգադրեցէք։

ԲԱՔՈՒ. պ. պ. Մկք. Մաղաթեանցին և Գր. Աւետեանցին։ Ձեր անունները։ պ. Ց. Բաբայեանցից մեզ ուղարկած երկու տասնեակ ռուբլին ստանեցինք «Մշակ» լրագրի խմբագրութեան։

— պ. Մ. Մաղաթեանցին։ Ձեր ուղարկած հինգ ռուբլին հասցրինք «Արձագանք» շաբաթաթերթին։

ՄՕՍԿԻԱ. պ. Լ. Մանուէլեանցին։ «Ֆրուզից» Ձեր երկու հրաշալի թարգմանութիւնները առ այժմ չենք տպագրելիս։

ՀԱՅԿ ԳՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՆԱՄԵՆՅԱՆ ԳՐԱԳԻՐԱՆ ԱԳԱՊԵՄԻԱ

Խմբագիր—Հրատարակիչ՝

ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ